ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 24/06/2020թ. թիվ
143 նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԳԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ

2020

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 .Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) ԳԿՄԿ (այսուհետ՝ Կենտրոն) չափորոշիչ է, որը սահմանում է մագիստրոսական թեզերում ներառված հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման, հանրայնացման ու իրազեկման գործընթացները:

1.2 .Սույն կարգը մշակված է Եվրոպական և ազգային որակավորումների շրջանակի, ՀՀ ,,Կրթության մասին,, ,,Բարձրագույն և հետբուհական կրթության մասին,, օրենքների համաձայն, բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչներին համապատասխան:

1.3 .Սույն կարգով սահմանված պահանջները տարածվում են ԳԿՄԿ-ի մագիստրոսական կրթություն իրականացնող բոլոր ամբիոններին:

1.4 Սույն կարգը սահմանում է ԳԿՄԿ-ի գիտական ներուժի արդյունավետ, նպատակային վերարտադրության ապահովումը, ԳԿՄԿ-ի հետազոտական արդյունքների հանրայնացումը, իրազեկումն ու հանրային պահանջարկի գույքագրումը:

1.5.Սույն կարգը սահմանում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում հետազոտությունների արդյունքների պահանջարկի վերհանումը, մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքում հետազոտական նոր արդյունքների առաջադրումը, ԳԿՄԿ կրթական ծրագրերի հետազոտական բաղադրատարրի արդիականացումը:

2. Ամբիոնների կողմից հետազոտությունների հանրային պահանջարկի գույքագրումը

2.1 Հետազոտությունների արդյունքների հանրայնացումը, իրազեկումն ու հանրային պահանջարկի գույքագրումը իրականացվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնների և հանրային կապերի բաժնի համագործակցային աշխատանքի արդյունքում:

2.2 Հետազոտությունների արդյունքների հանրայնացման, իրազեկման ու հանրային պահանջարկի գույքագրման գործընթացը իրականացվում է ԳԿՄԿ ամբիոնների վարիչների համակարգմամբ:

2.3 Ամբիոն վարիչը ձևավորում է աշխատանքային խումբ՝ կազմված ամբիոնի երեք առաջատար դասախոսներից և հանրային կապերի բաժնի աշխատակցից, ձևավորում աշխատանքային ծրագիր՝ հիմքում դնելով ամբիոնի մասնագիտացումից բխող ապրանքային շուկաների ուսումնասիրությունը, պահանջարկ վայելող հետազոտությունների գերակա ուղղությունները:

2.3 Աշխատանքային խումբը մասնագիտական թիրախային կազմակերպություններում նպատակային իրականացնում է կարիքների հետազոտություն համապատասխան սույն կարգի հավելվածի /հավելված 1/:

2.4. Աշխատանքային խումբը գույքագրում է թիրախային մասնագիտական կազմակերպություններում առկա հետազոտական առաջնահերությունները:

2.5. Աշխատանքային խումբը մշակում, մոդելավորում է թիրախային առաջնահերթությունները՝ ձևավորելով մագիստրոսական թեմաներ՝գործողությունների հետևյալ հերթականությամբ.

ա/ քննարկվում է մասնագիտական ամբիոններում՝ թիրախային կազմակերպություններում մոդելավորված հետազոտական թեմաները,

բ/ ամբիոններում մոդելավորված մագիստրոսական թեզերի թեմաները քննարկվում են թիրախային կազմակերպությունների հետ կազմակերպվող ֆորումներում,

գ/ Մոդելավորված հետազոտական թեմաների շուրջ առկա երկկողմ /ամբիոն-թիրախային կազմակերպություն/ համաձայնության դեպքում թեմաները հաստատվում են ԳԿՄԿ գիտական խորհրդում:

3. Հետազոտությունների արդյունքների հանրայնացումն ու իրազեկումը

3.1.Ամբիոնում ձևավորված մասնագիտական խմբի կողմից կազմակերպում են ֆորումներ, պրեզենտացիաներ՝ մագիստրոսական թեզերի հետազոտական արդյունքները ներկայացնում շահառուներին:

3.2. Առաջարկը ներառում է հետազոտության գինը, որի հիմքում դրված է տվյալ առաջարկի ծրագրային բյուջետավորումը:

3.3. Հաշվառվում է ինքնարժեքը, ակնկալվող շահույթը և գնային առաջարկ է ներկայացվում շահառուներին:

3.4.Գործընթացը մտնում է բանակցությունների փուլ, որտեղ քննարկվում է հետազոտության ներդրման պայմանները: